

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՀՈԼՈՎՄԱՆ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ԿԱՐԼ ՀՈՐՄՍ ՇՄԻԴՏ (ԳՅՀ)

Ներկա հոդվածը կազմված է հինգ մասից. 1. Ներածություն, 2. Ձայնդարձի, բազմաձևության և տարահիմք հոլովման մի շարք օրինակների քննություն, 3. Դիտողություններ հնդեվրոպական (հ.-ե.) լեզուների միջև հին հայերենի աշխարհագրական-բարբառային դիրքի մասին, 4. Երկու հոլովների քննարկում, 5. Համառոտ ամփոփում:

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լեզվի պատմության տեսակետից հին հայերենի (հհ) անվանական հոլովումը միջին դիրք է գրավում հ.-ե. հիմք լեզվի վերականգնված ձևերի և նոր հայերենի (նհ) հոլովման համակարգի միջև: Հին և նոր հայերենների հոլովման տիպերի զուգադրությունը թույլ է տալիս պարզելու երեք գլխավոր հատկանիշ, որոնք բնորոշում են անցումը հհ-ի թեքականությունից նհ-ի կցականության: Դրանք են՝

ա) Շարահյուսական տեսակետից բառերի ինֆեռուցիայանք¹, որ մեծ չափով պահպանել են հհ-ի որպես որոշիչ հանդես եկող միավանկ ածականները, հակադրվում է նհ-ի խմբային թեքումը² որոշչային խմբում անհոլով ածականների առկայությամբ:

(1) Հհ մեծ-ի արքայ-ի տօ՞ւ քաջալօս քաջալօս (Մատ. Ե. 35), որի դիմաց՝ նհ մեծ սեղան-ի՞:

բ) Ձևաբանական տեսակետից՝ թվի և հոլովի գործառույթները, որոնք հհ-ում համընկնում էին մեկ ձևովի մեջ, նհ-ում բաշխվում են երկու ձևովի վրա՝ եզակի և հոգնակի թվերում նույնական հոլովական ձևովի միշտ հետևում է թվի ցուցչին: Այսպես.

(2) Հհ եզ. ուղղ. ազգ, հոգն. ազգ-ք, եզ. սեռ. ազգ-ի, հոգն. ազգ-ից, նհ եզ. ուղղ. ազգ, հոգն. ազգ-ք, եզ. սեռ. ազգ-ի, հոգն. ազգ-ք-ի:

գ) Բառափոխական դասերի տարբերակվածության տեսակետից նկատելի է հհ-ում պահպանված հ.-ե. բազմաձևության⁴ հետագա վերացման լայն միտում.

¹ Հմմտ. այդ հասկացության բնորոշումը՝ G. Deeters. Die Stellung der Kharthwelsprachen unter den kaukasischen Sprachen.—Revue de Kartvelologie Bedi Kartlisa, 23, 1957, S. 14՝ «նախադասության յուրաքանչյուր բառ ինքնուրույն է և ունի հատուկ ձևովներ, որոնք արտահայտում են նրա կապը որևէ այլ բառի հետ (համաձայնություն) կամ նրա գործառույթը նախադասության մեջ (թեքում)»:

² Տերմինի համար հմմտ. F. N. Finck. Die Haupttypen des Sprachbaus. Leipzig. 1910, S. 144, 154 (հռն. հիմնային թեքում $\longleftrightarrow$ արար. արմատական թեքում $\longleftrightarrow$ վրաց. խմբային թեքում). «Սակայն հաճախ հանդիպում են նաև միավորների խմբեր, որոնք, ինչպես հենց նոր կազմավորվող բառերը, թվում է, միմյանց հետ ավելի թույլ են կապված»:

³ Հմմտ. սակայն, H. Jensen. Altarmenische Grammatik. Heidelberg. 1959, S. 158. «Ինչ հայերենում բազմաձևակ ածականները չեն համաձայնում՝ բազում մարգարե-ք բառի շուրջը» (Մատ. ԺԳ, 17): Շեղումներ կան նաև միավանկ ածականների դեպքում՝ ի նոր. ճանդեր-է ձո (քաջալօս շուրջ) (Ղուկ. Ե, 36):

⁴ Բազմաձևություն տերմինի համար տե՛ս E. Lewy. Die Heimatfrage.—KZ, 58, 1931, S. 7=Kleine Schriften, Berlin, 1961, S. 205.

(3) ՀՀ եզ. ուղղ. ազգ, սեռ. ազգի, գործ. ազգի, հոգն. սեռ. ազգից > նհ. ազգ, ազգի, ազգով, ազգերից. հհ ձի, ձիայ, ձիով, ձիաց > նհ. ձի, ձիս, ձիով, ձիերից:

2. ՁԱՅՆԴԱՐՁԻ, ԲԱՋՄԱՋԵՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱՀԻՄԺ ՀՈՂՈՎՄԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՍՐԻՆԱԿՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Ի տարբերություն հհ թեքական հոլովումից նհ կցական հոլովման անցումի, հհ հոլովակազմության համեմատությունը հ.-հ. վերականգնված կաղապարի հոլովման համակարգի հետ որևէ տիպաբանական փոփոխություն չի հայտնաբերում. հհ պահպանում է թեքական լեզվի իր կարգավիճակը. հին հ.-հ. լեզուների բնորոշ հատկանիշները՝ միաբուն և տառաճիմֆ հոլովումների⁵ տարբերակումը, ձայնդարձը, բազմաձևությունը և թեքականության սկզբունքներով կառավարված հոլովակաձևային ձևերը, դեռևս առավել կամ նվազ չափով պահպանված են, որ կարելի է ցուցադրել ձայնդարձի, բազմաձևության և տառաճիմֆության մի քանի օրինակներով:

Ձայնդարձի վերաբերյալ կարելի է թերևս պնդել, որ շնայած պատմական ժամանակաշրջանում արդեն ավարտված՝ ձայնավորների քանակային տարբերության կորստին՝

/4/ նախն. * i ī ē e a ā o ō u ū
 չհ. ի Է ա օ ու

և շնայած երկրորդային ու ձայնավորների հետագա, մասամբ շրջապատով պայմանավորված փոփոխություններին, հ.-հ. ձայնդարձի արտացոլումները դեռևս հստակորեն նկատելի են, ինչպես, օրինակ, հիմքերի հերթագայության (Ձ 6բ) կամ արխաիկ հոլովում ունեցող ազգակցական անունների դեպքում:

(5) քոյր < *pēir < *suesor, սեռ. տր. ներգ. քեռ < *suesr-ōs, -ei, -i = հիր. siur, սեռ. sethar (փխ. *sesar, ինչպես՝ bráthair, brathar; máthair, máthar), հայր < *pəter, հայր < *pətr-ōs, -ei, -i, հարբ < *հարբ < *pətr-bhi, հարս < *հալլահարս < *pəter-nis⁶:

Բազմաձևություն

Բազմաձևությունը, որ մի քանի տարի առաջ ի մի բերված քննարկվել է է. Գ. Թումանյանի կողմից⁷, հանդես է գալիս հոլովների կառուցման մեջ, որը Մեյլեի⁸ առաջադրված համաձայն կարելի է բաժանել երկու խմբի՝ ա) անփոփոխ և բ) փոփոխական հիմքերի:

(6) ա) Եզ. ուղղ., հայց., ներդ. գետ: սեռ., տր., բաց. գետ-այ, գործ, գետ-ով, որի դիմաց՝ բ) Եզ. ուղղ., հայց. մասն: սեռ., տր., ներգ. մասին, գործ. մասամբ. հոգն. ուղղ. մասունք:

ա խումբը համապատասխանում է օ-, ա-, ի- և ու- հիմքերի շրջա ձայնավորահիմք դասերին, բ խումբը ձայնորդահանգ ր/դ և ն-ով հիմքերի հեր-

⁵ Տերմինների մասին. միաբուն-ը (monothematisch) համապատասխանում է Վ. Դե-դանի առաջարկած declinazione monotematica-ին հմտ. J. Knobloch. Sprachwiss. Wörterbuch, Lfg., 7. Heidelberg, 1974, S. 527.

⁶ Հմտ. R. Schmitt. Grammatik des Klassisch-Armenischen. Innsbruck, 1981, S. 100.

⁷ Э. Т. Туманян. Структура индоевропейских имен в армянском языке. Опыт реконструкции. М., 1978.

⁸ A. Meillet. Altarmenisches Elementarbuch. Heidelberg, 1913, S. 45 f.

թագալուծյուն ունեցող դասերին: Բառաձևերի մեծ մասում արդեն ու հիմքով է հոլովվում հնագույն տարահիմք հոլովման հանգող հետ (№ 12) բառը, ինչպես նաև համաբանությամբ՝ սրա հետ հանգավորվող ջուր բառը:

(7) Հուր, սեռ. հրոյ, գործ. հրով, հնաձև՝ հուրք. ջուր, սեռ. ջրոյ, գործ. ջրով, ջուրք, հոգն. սեռ., տր., բաց. ջրոց, ջուրց:

Հին հայերենը կորցրել է պայթականով և s-ով հիմքերը. *s-ով նախկին չեզոք **h₂weros* «չերմություն, տաքություն» հիմքը, որը սկզբնապես զուգաբանություն էր արևելահնդեվրոպական լեզուների՝ հին իրանականի, հունարենի, հայերենի համար (№ 13 և 14), հետո աբդեն հոլովվում է n-ով հիմքերի նման⁹:

(8) Հ.-հ. **gwheros* չեզ., սեռ. **gwheresos* (= հուն. θέρως «ամառ, հունձք», հիբ. *haraḥ* «բոց, տոթ, տաքություն») > հ. ջեր, սեռ. ջերոյ:

Անցումը ն-ով հիմքերին տեղի է ունեցել միայն եզակի թվում մարմնի մի շարք դույզ անդամների անունների դեպքում:

(9) Ուռն, սեռ., տր., ներդ. ուռին, հոգն. ուրք, ուռից. հետ, հետոյ¹⁰. հուն. πούρ, πούρος: πούρον, ձեռն : ձեռին : ձեռք, ձեռաց : հնաձև՝ ձերք-ակալ : հուն. κείρ (դոր. κῆρ, էոլ. եզ. հայց. κέρρ'), խեթ. *keššar*, տր. *kešri*, թուս. *tsar*, Բ *šar*, ակն, ական : հուն. ὄκνον, Հես., լես. ὄππατα : հոգն. աչք. աչաց < երկակի *h₃okvith₁* + *k*: հրուդ. ОЧН, լիտվ. *akis*, հուն. ὄσσε, թուս. *es*. ունկն, ունկան (ուն-ը՝ ն-ի ընդլայնումից) : եզ. սեռ. հոմ. οὐατος, գործ. *ausins*: հոգն. ականքք, ականքաց¹¹, —ավ., հրուդ. ушн, հուն. οὖς-ի գիմաց:

Գ. Բ. Զահուկյանը¹² այս նյութը ծուր և զուր բառերի հետ միասին

(10) ծուր < **gonu-r* (ծուրգ-ի կողքին, հետագայում ծուրգն) : հոգն. ծուրգք, ծուրգաց. դուռն, սեռ., տր., ներդ. դրան : հոգն. դրունք, դրաց (դրանց), կապում է բառերի մի խմբի հետ, որոնք ձևական տեսակետից բնութագրվում են հիմքակազմության փոփոխությամբ և իմաստի տեսակետից՝ նախնական երկակիությամբ: Այստեղ մենք չենք կարող քննել յոթ-ի օրինակների և դուռն բառի մեջ ն-ի ստուգաբանական ծագման վիճելի հարցը¹³, և մեզ մնում է պնդել, որ այս բառերի եզակին ն-ով հիմքերի գործուն. հոլովման շարքն անցնելու հետևանքով պայթական կամ -r հանգով հիմքերի անսովոր

⁹ Հմմտ. G. R. Solta. Die Stellung des Armenischen im Kreise der Indogermanischen Sprachen. Wien, 1960, S. 73 f.

¹⁰ Զայնորդի *e* աստիճանը հանդում է հնագույն չեզոք ձևին, հմմտ. ... Schulze. KZ, 48, 1918, S. 236 = Kl. Schr., Göttingen, 1966², S. 81.

¹¹ Այն ձևի և նրա հետևողությամբ կազմված ունկն-ի, ինչպես և աչք. ու ականքք ձևերի զուգահեռության վերաբերյալ հմմտ. Meillet. BSL, 36, 1935, S. 107 f. = Etudes de Linguistique et de Philologie Arméniennes, II, Louvain, 1977, S. 272 f., որը ականքք-ի ակ-ը ստուգաբանորեն կապում է հուն. ὄκνον-ի լեսյո հետ (k-ի պահպանումը ակ-ի մեջ նա բացատրում է բառի արտահայտչական բնույթով):

¹² Г. Б. Джаукян. Сравнительная грамматика армянского языка: Ереван, 1982, с. 119 (հմմտ. նաև էջ 117):

¹³ Ա. Մեյեն Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique (Wien, 1936²) դրքի 83 էջում այս ն-ն բխեցնում է եզ. հայց. **h₂-*ից, իսկ 56 էջում բառավերջի-ն-ի պահպանումը այս դեպքում և այլ օրինակներում հիմնավորում է շարժվող ռ-ի զարգացմամբ՝ երբ (արտասանվում է երբև), ուն, շարժումն, հմմտ հուն.-լատ. -men : Պի-զանին (Ricerche Ling. 2, 1931, էջ 47 և հաջ.) սրա մեջ, ընդհանրապես, տեսնում է տարահիմք հոլովման հետքեր, այսպես՝ Հ.-հ. նախկին հնագույն բաղաձայնահանգ հիմքերի ընդլայնումը -en-ով (հիբ. *ars-i*. *aks-ḥ-ds* ախլը), որ սակայն հնարավոր չէ համաձայնեցնել ինչպես բերված փոխակի հարաբերական ժամանակագրության, այնպես էլ նրա կառուցվածքի նետ: Այնուհետև այս հարցը քննվել է Բ. Շտեմպելի կողմից KZ-ում:

քնույթն է ստացել¹⁴, Որբանով այդ չի վերաբերում համաքանական կազմութուններին (ալանջֆ՝ ալֆի համաքանությամբ), Ն՝ 9-ի օրինակների հոլովումը ա-ով (ձեռֆ, ալֆ, ալանջֆ) կամ ի-ով (ոտֆ) հիմքերի նման հավանաբար պայմանավորված է ուղղակի անցումով հնագույն երկակիից, ինչպես այդ դեռևս հնարավոր է ապացուցել ալֆ-ի մեջ **h₂* շրթնայնացած կոկորդայինի քմայնացմամբ (կիսաշփականի վերածվելով): Անցումը ա և, ավելի նվազ չափով, ի հիմքով հոդնակիին հետևում է այդ դասերի բարձր հաճախականությունից, որ Թումանյանի հաշվումներով (1978, էջ 149, ժան. 7) հավասար է 149-ի: Ըստ այդմ, երկակի թվի կորստի ժամանակաշրջանում պետք է որ արդեն անհետացած լինեին նաև սեռային հստակ տարբերակումը՝ որպես իգական հանդես եկող ա-ով հիմքերով¹⁵: Ն-ով հիմքերի և ձայնավորահանգ հիմքերի դասերի հարացուցային տեղաշարժը սակայն ներառում է նաև այլ օրինակներ:

(11) ա) Ժողովուրդ, Ժողովուրդեան : հոգն. Ժողովուրդք (ո հիմք). բ) ֆար, ֆարի (ո հիմք) : հոգն. ֆարիեֆ, ֆարանց, երեց, երիցու : հոգն. երիցունեֆ, երիցանց,

որոնք հնարավոր չէ այստեղ քննարկել:

Տարաճիմֆ հոլովում

Հնագույն տարահիմք *r/n* հոլովման հարացուցի մի տիպի վերապրուկները բաշխվում են հին հայերեն հուր և հնոց բառերի վրա¹⁶:

(12) Հհ. հուր, սեռ. հրոյ (Ջ 7): հուռ. *πῶρ*, *πῶρ*, ումբ. *pir*, *purom-e*, «կրակի մեջ»: հհ. հն-ոց (**run-*): հ.-հ. **peh₂ur*, սեռ. **ph₂uens*: խեթ. *pah₂-hur*, *pah₂hwenas*: Թոխ. Ա. *por* < **paur*:

Այս օրինակում հունարեն և ումբերեն զուգահեռները թույլ են տալիս եզրակացնելու, որ նաև հին հայերենում նախապես պետք է տարբերակում լինեի **u*-ի (ուղղական) և **ü*-ի (թեք հոլովներ) միջև: Նոր զարգացած քանական տարբերակմամբ¹⁷ ձևակազմության հիմքը հունարենում և ումբերենում թեք հոլովների *u*-ն է և ուղղականի *r*-ն¹⁸: Դրան հակառակ, խեթերենում պահպանվել է բաղաձայնների տարահիմքային հերթագայությունը:

3. ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ-ԲԱՐՐԱՌԱՅԻՆ ԴԻՐՔԻ ՄԱՍԻՆ

Հ.-հ. լեզուների միջև հին հայերենի դիրքը որոշելու կարևորագույն մեթոդական օժանդակ միջոցը 1876 թ. Լեակինի կողմից առաջ քաշված հիմնադրույթըն է՝ «նեղ ազգակցության շափանիշները կարելի է գտնել միայն համապա-

¹⁴ Այդ հավասարապես կարող էր վերադրվել, օրինակ, կն-ով վերջացող կենդանիների անուններին՝ ձուկն, սեռ. ձկան, մուկն, մուկն, մժղուկն, հիմտ. *Solta*, 1960, տողատակի 9-րդ ժանոթադրույթունը 189 էջում, հհ-կ ածանցի համար հիմտ. *Specht*. Der Ursprung der indogermanischen Deklination, Göttingen, 1947, S. 213:

¹⁵ Սեռերի անհետացման վրա քարթվելական լեզուների ազդեցության մասին տե՛ս G. Deeters. Armenisch und Südkaukasisch.—Caucasica. 3, 1926, S. 37—32, 4, 1927, S. 1—64.

¹⁶ Հիմտ. Meillet, 1936, [Fußnote 13] S. 82 f.

¹⁷ Այս վերականգնման և հուռն. /u/ : /ü/ ձայնավորների հերթագայության համար հիմա. H. Rix. Historische Gram. des Griechischen. Laut- und Formenlehre. Darmstadt, 1976, S. 126 f. Նախաձեռն սկզբնահնչյունների համար հիմտ. նաև F. O. Lindemann. Einführung in die Laryngaltheorie. Berlin, 1970, S. 59 f. Д ж а у к я н, 1982, с. 121, нрnm. 12.

¹⁸ Հիմտ. տարբեր իրացումները գերմանական լեզուներում. հիսլ. *förr* ար. ս. (**pūr-*), հիդ. *flur*, ավելի հին ձևը՝ *fuir*, հասթս., հֆրիդ. *flur*, գոթ. *fōn* (**pūdn*), սեռ. *funins*:

տասխան չվճարների դրական համընկումների մեջ, որոնք միաժամանակ շեղումներ են այլ լեզուների համեմատությամբ»¹⁹, և այնպիսի գիտնականների աշխատությունները, ինչպես Զ. Բոնֆանտե²⁰, Վ. Պորցիգ²¹, Գ. Ռ. Զոլտա (1960, էջ 482, ժան. 9), Գ. Բ. Զահուկյան²² և այլք, որոնք հաստատում են առաջին անգամ շուրջը Պեդերսենի կողմից 1906 թ.²³ ձևակերպված դրույթը՝ «հայերենը ոչ մի հ.-ե. լեզվի այնքան մոտ չի կանգնած, որքան հունարենին»²⁴, Հին հայերենը և հունարենը, որոնք մի շարք բառային²⁵ զուգարանություններով կապված են միմյանց հետ, երկու կարևոր (հնչյունական և ձևաբանական) ընդհանուր հատկանիշ ունեն նաև այլ լեզուների հետ. 1. փոյուզեթենի հետ՝ կոկորդայինի հանգող նախահար ձայնավոր²⁶։

(13) փոյուգ. անք տողամարդ», հհ. այր, հռն. անք: վեգ. *nar-*, այր՝ *njer*, օսկ. *nerum* մարգվանց»։ 2. փոյուգեբերնի և հնդիրաւնականի²⁷ հետ՝ աճականը.

(14) Գլխուղ. առէ; Եկանգնեցրից : Խեթ. *dalīs*, հնդ. *a-bharat* > **e-bhe-ret*: հն. Խ-բեր, հուն. *ἐ-περε* :

¹⁰ A. Leskien. Die Declination im Slavisch-Litauischen und Germanischen (Leipzig, 1876) VII.

²⁰ G. Bonfante. Les Isoglosses gréco-arméniennes. I. Faits phonétiques.—Mélanges linguistiques offerts à M. Holger Pedersen, Aarhus, 1937, p. 15—33.

²¹ W. Porzig, *Die Gliederung des Indogermanischen Sprachgebiets*. Heidelberg, 1954, S. 154 f.

²² G. B. Djahuklian. The Position of Armenian in the Indo-European Languages.—First International Conference on Armenian Linguistics: Proceedings, Delmar, New York, 1980, p. 13 (*այսինքն* FICAL).

²³ H. Pedersen. Armenisch und die Nachbarsprachen.—KZ 39, 1906, 442 = Kleine Schriften zum Armenischen. Hildesheim-New York, 1982. S. 270.


²⁴ Հմտ. աղբյի ուշ՝ H. Pedersen. Armenler. B. Sprache.—Reallexikon der Vorgeschichte. Hrsg. von Max Ebert. Band I, Berlin, 1924, S. 225 = Kl. Schr. [Fußnote 23] S. 308. ... հայերենը հ.-հ. կենդանի լեզվաճյուղերի միջև առնվազն երեք կողմերից մերձավոր ազգակցական կապեր ունի՝ արևել. հունարենի, արևել. հնդ-իրանականի, հյուս. բալթիկ-սլավոնականի հետ։

²⁵ Հուհւն-հհ.՝ *yes-nu-եհադնդիւ (էնտրմ/դ-գեղումս)՝ հ.-հ. *yes-ի (անբռն) դիմաց. ἀραρεῖν (դրդն. առբ., կատ. ἀραρα) Էհադիւ, միացնել/ արարի. γέλως, Էթեթադըթադր *smel-ի դիմաց (հուհւ. μεῖδος. γέλως, Հես. Բիւղալաւիդէ). ալեա/աղամ, ալառոյ/ալիւր. *mel-ի դիմաց (հայ. մալեմ, հուհւ. մօղն):

²⁰ Հմմտ. J. A. C. Greppin. Initial Vowel and Aspiration in Classical Armenian, Wien, 1973, p. 15; E. Polomé. Armenian and the Proto-Indo-European Laryngeals. FICAL, 1980, [Fußnote 22], S. 29; J. Pokorny. *Idg. etym. Wd.*, Bern-München, 1959, S. 765.

27 Հին հայերենի և հին հնդկերենի (+ իրան.) միջև բառային մի շարք զուգաբանությունների մեջ հավանաբար հ.-հ. բանաստեղծական լեզվից ժառանգած ունեցվածքին են պատկանում հհ. հնդ. արեւ, -ու *ravi-*, հհ. լիգ. ձի, -ոյ *hāya-*, երգ, -ոյ *arka-* շնորհապաթ, երգչ, հհ. լիգ. ավիստ. արծիւ, արծուի *rji-pyā-cuahir* թռչող *arəzi-fya-cարծիւ*։ հմմտ. R. Schmitt. Dichtung und Dichtersprache in indogermanischer Zeit. Wiesbaden, 1967, էջ 339 և հաջ.։

Նախահավելվածի և աճականի՝ որպես հատկապես հին նորակազմությունների²⁸ հիման վրա ես իմ վաղ աշխատություններում²⁹ հին հայերենը, արևելահնդեվրոպական լեզուներ հունարենի, հնդիրանականի և փոյուգերենի հետ միասին տեղագրել եմ տարածաժամանակային մի եռանկյունու մեջ (triangle of time and space), որն իր կառուցվածքով սկզբունքորեն հետևում է Մայդի կաղապարին³⁰:



Տարածաժամանակային եռանկյունին ծառայում է Ֆիլադելֆիայի Հայագիտական առաջին միջազգային կոնֆերանսում առաջադրած մեր վարկածի լուսարանմանը. ըստ հնարավոր եմ համարում, որ համընկումներն այս լեզուների միջև ավելի լայն էին նախապատմական ժամանակներում և հետագայում մթազնել են ավելի ուշ նորակազմությունների հետևանքով: Այլ խոսքով, կարելի է ասել, որ մ. թ. ա. XV դարի չվկայված հայերենը ավելի սերտ կապեր է ունեցել հունարենի և հնդիրանականի հետ, քան պատմականորեն վկայված՝ մ. թ. V դարի հայերենը³¹:

²⁸ Հմմտ. Porzig, 1954, [Fußnote 21] S. 155 (նախահար ձայնավոր՝ առանց փոյուգ-հաշվառման), էջ 86 (առական), զգործածությունը հնագույն ժամանակ ազատ էր և, ի միջի այլոց, պայմանավորվում էր նաև տաղաչափության պահանջներով: O. Szemerényi. Einführung in die vergleichende Sprachwissenschaft. Darmstadt, 1980², S. 277 f. (առականի վերաբերյալ). հեղինակի Altarmenische Miscellen.—Annual of Arm. Linguistics, 1, 1980, S. 4 f. (առականի վերաբերյալ):

²⁹ Հմմտ. Armenian and Indo-European.—FICAL, 1980, (Fußnote 22) S. 39. Հին հայերենի բայի հնդեվրոպական հիմքը.—Համաժամ-բանասիրական հանգես, 1984, № 2, էջ 10 = Die indogermanischen Grundlagen des altarmenischen Verbums.—KZ, 98, 1985, S. 214—237.

³⁰ Հմմտ. W. Meid. Probleme der räumlichen und zeitlichen Gliederung des Indogermanischen.—H. Rix (հրատ.) Flexion und Wortbildung. Akten der V. Fachtagung der Indogermanischen Gesellschaft. Wiesbaden, 1975, S. 204—219: Հմմտ. նաև քննական բանավեճ՝ B. Schierath. Ist ein Raum/Zeit-Modell für eine rekonstruierte Sprache möglich?—KZ, 95, 1981, S. 175—202. Նույնի՝ Sprachvergleich und Rekonstruktion: Methoden und Möglichkeiten.—IL, 8, 1982—1983, S. 53—69; Է. Կամպանիլի, Փ. Կրեվտսկի, Մ. Դոբրայի, Ռ. Գուլամանի, Ռ. Լադերոնի, Է. Նոյի, Գ. Ռամաուի, տողերիս հեղինակի, Հ. Շարունի հոգվածները IL-ում՝ 9, 1984, էջ 63—152; J. Untermann. Ursprache und historische Realität. Der Beitrag der Indogermanistik zu Fragen der Ethnogenese. Studien zur Ethnogenese. Rheln.—Westfäl. Akad. d. Wiss., Abhdl., 72, 1984, S. 133—164:

³¹ Հմմտ. տողերիս հեղինակ, 1980, էջ 39, ծան. 29:

4. ԵՐԿՈՒ ՀՈԼՈՎՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Երրորդ մասում ուղղագծված վարկածը հիմնավորելու համար անհրաժեշտ է ցույց տալ ընդհանուր նորակազմությունների առաջացումը արևելահնդեվրոպական լեզուների անվանական հոլովման մեջ: Մավալային նկատառումներով այստեղ ևս կսահմանափակվեմ երկու հոլովի քննարկմամբ՝

ա) ընդհանրապես գործիականի և բ) ո-ով հիմքերի եզ. սեռ., տր. բացառականի:

ա) Գործիական հոլով

Այլ լեզուներում (հնդիրան., կելտ.) *-bhi կամ *-bhis ձևով հոգնակի թվով սահմանափակվող գործիականի *-bhi ածանցի եզակի թվով գործածությունը (հայերենում) մատնանշել է դեռևս Հ. Հյուբշմանը³², ուշադրության առնելով *-mī-ով բալթիական և սլավոնական զուգահեռները:

(16) Հհ. բան, եզ. գործ. բանի < *bhadni-bhi, հոգն. բա-նիք < *bhadni-bhi-s (?): հբալդ. pōtē «ճանապարհ», եզ. գործ. pōtē-mē, հոգն. pōtē-mī, լիավ. vāgīs «գող», եզ. գործ. vāgī-mī, հոգն. vāgī-mīs:

Բացի այդ, անհրաժեշտ է ուշադրության առնել նաև հուն. -πι(ν) ձևը, որը միկենյանում կիրառվում է որպես հոգնակի, Հոմերոսի մոտ՝ որպես գեղարվեստական լեզվական տարբերակ, բայց երկրորդաբար նաև որպես եզակի, ինչպես նաև սեռ. -բաց. ու տր. հոլովների գործառույթով³³:

(17) Միկ. πο-ρι = *pod-bhi «ռաքերով», τε-υ-κε-ρι — *teχ3ε3p1 «սարքերով», Հոմ. ὄγ3ε3p1 «կառքերով», — σὺν ἱπποισιν καὶ ὄγ3ε3p1 Δ 297, որի դիմաց՝ ἰλιϋφι κλ3τ3 τε3χ3ε3 «Իլիոնի հռչակավոր պարիսպները»:

Ձևականորեն այս մասնիկի առումով հին հայերենը շեղվում է հյուսիս-հնդեվրոպական՝ բալթ. սլավ. և գերմ. լեզուներից և դրանց փոխարեն մերձենում հուն. հնդ.-իրան. և կելտ³⁴. լեզուներին: Եզակի թվին փոխանցվելով, ընդհակառակն, համաձայնում են հին հայերենը, բալթիականը և սլավոնականը, եզակի դիրք է զբաղում նաև հոմեր. հունարենը, թեև այստեղ գործառույթի ընդլայնումը և գեղարվեստական լեզուն դժվարացնում են ուղղակի համեմատությունը: Ձևական տարբերական պատճառով գործիական հոլովի գործառույթյան նմանատիպ զարգացումը հին հայերենում, բալթիականում և սլավոնականում հավանաբար պետք է գնահատել որպես ավելի նոր իմաստային զուգաբանություն³⁵:

բ) ո-ով հիմքերի եզ. սեռ., բաց., տր. ու < *-osio ձևությամբ

(18) գեա-ոյ < *ued-osio

Հին հայերենում ունի սեռական, տրական և բացառական հոլովների գործառույթ: Այս իմաստի զարգացման համար հնարավոր է հաստատել մի շարք հաջորդական պրոցեսներ.

³² H. Hübschmann. Ueber die stellung des armenischen im kreise der indogermanischen sprachen.—KZ, 23 1875, S. 13 = Kl. Schr., hrsg. von R. Schmitt, Hildesheim-New York, 1976, S. 9. (հայերեն թարգմանությունը տե՛ս ԳԲՀ, 1985, № 4.-Ց. Բ.):

³³ Հմմտ. Rix, 1976, էջ 158 և հաջ., ծան. 17. հնդինակի՝ 1980, էջ 46 և հաջ., ծան. 29:

³⁴ Հմմտ. հնդինակի՝ Dativ und Instrumental im Plural.—Glotta, 41, 1963, S. 1—10: Porsig, 1954, [Fußnote 21], S. 90 f.

³⁵ Համանման վիճակ գոյություն ունի կելտ., գերմ. և իտալ. տրական և գործիական հոլովներում. կելտ. *-bhos/-bhis-ը ձևով (*-bhis-ը իտալ. լկա) համապատասխանում է իտալականին, հոգնակի տրականը գործիականով փոխարինելու նոր միտումով, ընդհակառակն՝ գերմանականին: Գերմանականի համար որպես հոգն. տր. վերջավորություն հնարավոր է վերականգնել միայն *-mīs-ը՝ հոգնակի գործիականի հին ձևությամբ:

1-ին աստիճան. *-OSIO (դերանվանական ծագում ունեցող օ-ով հիմքերի եզ. սեռ.). օրինակ ֆալիսկերեն, հնդ-իրանական, հունարեն, հին հայերեն.

(19) ֆալիսկ. *Kaisiosio*³⁶, հնդ. *asvasya*, ավեստ. *aspahe* հոմ. ἄσπις, թես. πολέμοιο, մեկ. *do-e-ro-jo* (լատտ. *doļons*); հհ. գետոյ

2-րդ աստիճան. *-OSIO (օ-ով հիմքերի եզ. սեռ., նաև բաց.). օրինակ՝ հհ., հուն. բարբառային (որքանով որ *-OSIO-ն է որպես սեռականի ձև գործածվում և ոչ *-OSO-ն, հունարեն բարբառներում որպես մնացորդ գեռ պահպանվել է օ-ով հիմքերի եզ. բացառականը *-OD վերջավորությամբ՝ դելֆ. *Foraw* «տնից», գոր. *πῶ* «որտեղից», և այլն):

*-OSIO ձևույթի տարածումը օ-ով հիմքերի եզ. բացառականի վրա պայմանավորված է օ-ով հիմքերի մեջ եզ. սեռ. և բաց. հոլովների տարբերակվածության և այլ հիմքերի մեջ տարբերակվածության բացակայության միջև հ.հ. հոլովման համակարգում գոյություն ունեցած անհավասարակշռության:

Հավասարակշռության սահմանները չեն սահմանափակվել հունարենով և հին հայերենով, թեև այս երկու լեզուներից դուրս զարգացումն ընթացել է միանգամայն այլ ուղիով: Հնարավոր է սահմանել հետևյալ տիպերը.

1-ին տիպ. (իտալյան, փոքր ավեստա). եզ. բացառականի և սեռականի հակադրության փոխանցում օ-ից տարբեր հիմքերի վրա՝ օ-ով հիմքերի համաբանությամբ: Տարբերակումը հնարավոր է դարձել օ-ով հիմքերի բացառականի ձևույթի պատճենումով:

(20) եզ. բաց. հլատ. -ad, -id. օսկ. *toutad* 'civitate', *slaagid* 'fine', փավեստ. *daēnayat* (*daēnā*-հեռերքին էություն, «երոն»):

2-րդ տիպ. եզ. բաց. և սեռ-ի շտաբերակվածության փոխանցում օ-ով հիմքերի վրա օ-ից տարբեր հիմքերի համաբանությամբ: Այս տիպը հանդիպում է երկու դրսևորմամբ.

ա) Սեռականի *-OSIO մասնիկը սինկրետիկ կերպով տարածվել է նաև բացառականի իմաստների վրա, մինչդեռ բացառականի *-OD ձևույթը դուրս է մղվել: Վերը նկարագրված այս իրացումը ներկայացնում է հայերենի և հունարենի մի ուշագրավ ընդհանուր նորակազմություն, և պետք է ենթադրել բացառականի -ոյ < *-o-tos ձևույթի՝ հնչյունական օրենքների տեսակետից հնարավոր առաջացումը³⁷:

բ) Բացառականի *-od ձևույթը, ընդհակառակն, սինկրետիկ կերպով տարածվել է օ-ով հիմքերի սեռականի իմաստների վրա: Այս պրոցեսը բնորոշ է սլավոնականի, բալթիականի, իրերակելտականի և «դակերենի» համար:

³⁶ Հմմտ. A. Mackay Devine. The Latin Thematic Genitive Singular. Oxford: 1970, p. 23 ff.

³⁷ Հմմտ. սրա համար Schmitt. 1961, S. 113. Ժան. 6, որը որպես «գլխավոր ապացույց այն բանի, որ (պատահականորեն) համընկել են նախապես տարբեր վերջավորությունները (այսինքն՝ ուն. -ոյ < հ.հ. *-OSIO-ի բաց. ոյ < հ.հ. մակբայական *-o-tos, ինչպես այն առկա է վեդ. -tāh, հուն. -τος, լատ. -tus)», այսինքն՝ «օ-ով հիմքերի-ոյ վերջավորության և զրեթե մնացած բոլոր հոլովման տիպերի-է < *ոյ վերջավորության համադրակցումը, որ բխեցվում է հ.հ. *-o-tos : *-e-tos ձայնաբանային տարբերությունից՝ վկայակոչում է Ռ. Գոգելի դիտողությունը (An Introduction to the Study of Classical Armenian, Wiesbaden, 1975, p. 105), որը-է-ն արտացոլում է ոչ թե հոլովական վերջավորություն, այլ սկզբնապես անկախ մասնիկ (ետադրություն), որը ավելանում էր ներդրականին՝ ի լերին «սարի վրա» (բաց.) ի լեռն-է «սարի (վրայի)»» Pisanl. Jb. f. Kleinas. Forschung., Ul-2, 1965, էջ 359. 261. Manlissa, Svescia, 1978, 349-351. յ-ով՝ *-ոյ և *-ոյ < *ti = խեթ. -z < *-ti:

(21) *կզ. սեռ. հրուլղ. bog-a «աստծու» < *bhağ-ōd; լիտվ. tēv-o, լատվ. tēv-a «հոր» < *-ad (հիմնալին-ա-ձայնավորի համաբանաթյամբ՝ ուղղ.-as և ալլն) < *-ōd; լիտվ. kās «ով» : սեռ. kō իբրեւիտ. tocoitos : cue · sarnicio : cue : «Տոգետի և Սարճիկիալի» դակ. Decebalus per Scorilo «Դեկեբալ որդի Սկորիլայի»³⁸,*

Յ-րդ աստիճան. (*սեռ. /բաց. : 0-ով հիմքերի եզ. տր.*) Հին հայերենով սահմանափակված պրոցեսը սեռականի և տրականի սինկրետիզմի համաբանությամբ տեղի է ունենում ալլ տիպի հիմքերի մեջ: Այս աստիճանը բացահայտում է 0-ով հիմքերի *-oi վերջավորությամբ եզակի սեռականի ժառանգված կազմության անհետացումը:

Մնում է ավելացնել, որ i-ով և u-ով հիմքերի եզ. սեռ. տր. ներգ. հնչյունական օրենքների տեսակետից բացատրվում են հետևյալ սկզբունքով.

(22) -ի < *-iī-os/-ei/-i և համապատասխանաբար՝-ու < *-uū-os/-ei/-i-

i-ով հիմքերի եզ. սեռ. տր. ներգ. ձևերը անմիջապես հետո տարածվել են նաև a-ով հիմքերի վրա³⁹.

(23) բաց : սեռ. տր. ներգ. բացի < *bānīs : *bhanīi-os/-ei/-i, ախուհետև՝ ամ < *samā : սեռ. տր. ներգ. ամի. զգեստ, զգեստու < *-uestu- : *-uestuū-os/-ei/-i.

Որպես «հարակից տիպ» ընդունված № 22-ի⁴⁰ հիմքակազմությունը, որի համար ի միջի ալլոց կան հուն. և վեդ. զուգահեռներ,

(24) հուն. ὄφις «ոչխար» : սեռ. օֆի < *oūios. γόνυ «ծունկ», ὄστρον «սեղան» : սեռ. (Հոմերոսի մոտ) γόνυ, ὄστρον < *γόνϜ-ός, ὄσϜός, տր. < ներգ. ὄσϜի, ավելի նոր՝ γόνυατος, ὄσϜατος. վեդ. arī- «օտարական» : սեռ. aryaś. kratuh «բանականություն, խելք» : սեռ. kratvds.

Հին հայերենում լիովին արտամղել է հիմնական աստիճանում հիմքակազմ տարր և սեռ.-s վերջավորություն ունեցող՝ կառուցվածքով ավելի հին տիպը:

	Սեռ.	Տր.
i-ով հիմք	*-ei-s/*-oi-s	*-ei-ei/*-oi-ei
u-ով հիմք	*-eu-s/*-ou-s	*-eu-ei/*-ou-ei

(25)

:հնդ. agnih «կրակ» սեռ. agneh, տր. agnaye; bāhu-«բազուկ», սեռ. bāhoh, տր. bāhave

i-ով և u-ով հիմքերի տարբեր աստիճանների անհետացումը կարելի է դիտարկել նաև խեթերենում:

³⁸ Հմմտ. հեղինակի՝ Zum Problem des Genitivs der ō-Stämme im Baltischen und Slavischen.—Commentationes linguisticae et philologicae Ernesto Dickenmann iustrium claudenti quintum decimum. Heidelberg, 1977, 335—344; A. Beltrán, A. Tovar. Contrebia Belaisca, Botorrita, Zaragoza I. El Bronce con alfabeto 'ibérico' de Botorrita. Con un apéndice de E. Porta, Zaragoza, 1982; В. Георгиев. Тракийският език. София, 1957. с. 25 и сл.

³⁹ Հմմտ. Schmitt, 1981, [Fußnote 6], S. 113.

⁴⁰ Հմմտ. Szemerényi, 1960, [Fußnote 28], p. 163; Meillet. 1936, [Fußnote 13], S. 72.

(26) խեթ.	հդ. ուղղ.	եզ. սեռ.
Գոյ.	halkis «հացահատիկ»	halkias
Ած.	šallis «մեծ»	sallias
Գոյ.	harnaš «ծննդկանի մահիճ»	harnaš
Ած.	aššuš «լավ»	aššuš ¹¹

Այսպիսով, հ.-հ. i-/u-ով հիմքերի եզակի սեռականի համար պետք է ելնել հետևյալ հարաբերական ժամանակագրությունից.

- (27) 1) *-ei-s/*-ou-s (*-ei-ei/*-ou-ei — տր.)
 2) *-ei-e/os/*-ou-e/os
 3) *-(i)i-e/os/*-(u)u-e/os

Հին հայերենը համապատասխանում է երրորդ աստիճանին:

5. ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓՈՒՄ

Անցումը հին հայերենից նոր հայերենին ձևաբանական տեսակետից հանգեցնում է թեփական հոլովման փոխարինմանը կցականով, շարահյուսական տեսակետից՝ որոշչային խմբում բառերի ինֆեռույնության փոխարինմանը խմբային թեփումով: Հ.-հ. նախալեզվից հին հայերենին՝ միայն վերականգնման մեջ տեսանելի անցման ժամանակ, ընդհակառակն, պահպանվում են հ.-հ. լեզուների բնորոշ առանձնահատկությունները՝ տարահիմքությունը, ձայնդարձը, բազմաձևությունը, հոլովական ձևույթը, թեև մասամբ փոխակերպված կամ թուլացած ձևով: Հոգվածում այնուհետև տրված են ձայնդարձի և բազմաձևության օրինակներ, ընդ որում, վերջիններիս դեպքում հատուկ ուշադրության է առնված ն-ով ընդլայնված հիմքերի և նախապատմական երկակի փոխհարաբերությունը. հուր և հնոց բառերի հարացույցները քննված են որպես հին տարահիմքության ուշ իրացումներ. հայերենի՝ որպես արևելահնդեվրոպական լեզվի աշխարհագրական-բարբառային դիրքի մասին է բնականորեն հետևել է երկու կոնկրետ հոլովական ձևերի՝ *bhi-ով գործիականի (որի հայ., բալթ., սլավ. և, դրանցից տարբեր իրացումով, նաև հուն. արտացոլումները հոգնակիից անցել են եզակիին) և ո-ով հիմքերի եզ. սեռ. բաց. տր. հոլովներում հանդես եկող -ոյ վերջավորության քննություն: Ցույց է տրվում, որ ո-ով հիմքերի եզ. սեռ. բաց. տր. հոլովները տարբեր անցումային օղակներով զարգացել են հ.-հ. *-osiO-ից (դերանվանական ժազման ո-ով հիմքերի եզ. սեռ.), այսինքն բացառականի (հունարեն զուգահեռով) և ավելի ուշ տրականի (o-ից տարբեր տիպի հիմքերի կաղապարով) գործառույթների համաբանական փոխառումով: Այսպիսով, հդ. բացառականը վերջանում է նոր զարգացած -է մասնիկով, մինչդեռ սեռ. տր. ներք. հոլովները ձևով համընկել են: Օ-ով հիմքերի տարբեր զարգացումը, որ հիմնավորվում է հունարեն զուգահեռով, ապացուցում է այս վերականգնման ճշտությունը:

Գերմաներենից թարգմանեց Լ. Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆԸ

¹¹ Հին խեթ. համար հմմտ. E. Neu. Zur Stammbildung bei den i- und u-stämmigen Substantiven des Hethitischen.—Sprachwissenschaftliche Forschungen. Fs. J. Knobloch, Innsbruck, 1985, S. 259—264.

ИНДОЕВРОПЕЙСКИЕ ОСНОВЫ ИМЕННОГО СКЛОНЕНИЯ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА

КАРЛ ХОРСТ ШМИДТ (ФРГ)

Резюме

Установлено, что переход с древнеармянского к новоярмянскому с морфологической точки зрения приводит к замене флективного строя агглютинативным, в то время как при переходе с и.-е. праязыка к древнеармянскому (наблюдаемом только в реконструкции) сохраняются характерные особенности и.-е. языков — супплетивизм, аблаут, вариативность форм, падежная морфема, хотя и в несколько трансформированной и редуцированной форме. В статье даются примеры аблаута и вариативности форм, причем в последнем случае особое внимание уделяется взаимоотношению основ, расширенных формантом -п, и доисторического двойственного числа. Рассматриваются парадигмы слов *hpos'* и *hug* как поздние реализации древнего супплетивизма. После краткого экскурса о диалектно-географическом расположении армянского как восточноиндоевропейского языка дается анализ двух падежных форм — инстр. на **-bhi* и род., дат., отл. ед. ч. о-основ на *ou*. Показано, что последние через разные промежуточные ступени развились из и.-е. **-osio* (род. п. ед. ч. о-основ, местонменного происхождения), т. е. аналогическим заимствованием функции отложительного (с греческой параллелью), а позднее дательного падежей. Таким образом, отл. п. ед. ч. оканчивается новообразованной морфемой *ē*, в то время как род., дат., местн. падежи совпали по форме. Различное развитие о-основ, подтверждаемое греческой параллелью, доказывает правильность этой реконструкции.